ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

—o—

ՈՒՍՈՒՑԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ

—

Կովկասի հայոց դպրոցների ուսուցիչների և վարչութիւնների միութեան ընդհանուր ժողովը գիտակցելով հայոց գրերի գիւտի 1500-ամեակի և հայկական տպագրութեան 400 ամեակի տարեդարձների պատմական-կուլտուրական մեծ արժանիքը, որոշեց յանձնարարել միութեան բոլոր անդամներին, այլև Կովկասի հայոց դպրոցներում պաշտօնավարող բոլոր պաշտօնակից ուսուցիչ-ուսուցչուհիներին՝ լայն աջակցութիւն ցոյց տալ այդ տարեդարձների կատարման համար պաշտօնապէս ընտրուած յոբելեանական յանձնաժողովներին:

—

ԽՈՇՈՐ ՆԻՒԵՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Մի անյայտ անձնաւորութիւն թեմական յոբել. յանձն. նախագահ և թեմիս առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի միջոցով Զանգեզուրի գաւառի Գորիս աւանի դպրոցի շինութեան համար նուիրաբերել է 15 հազար ռուբլի։ Նոյն անձնաւորութիւնը խոստացել է նաև՝ շէնքի կառուցումն աւարտելուց յետոյ մի խոշոր գումարով բոլորովին ապահովել նոյն դպրոցի գոյութիւնը։ Ուրախալի է տեսնել դպրոցական գործի օգտին աւրող այսպիսի խոշոր նուիրաբերութիւններ, մանաւանդ որ մեր կեանքում շատ հազւադէպ են անյայտ մնալ ցանկացող բարերարները։

ԻՆՉ Է ԱՆՈՒՄ ԲԱԳՈՒՆ

—

Բագու, 15 յունիսի

Ամեն տեղ դարձեալ հարց է դրուած թէ ինչպէս տօնել տառերի գիւտի և տպագրութեան յոբելեանը։ Թիֆլիզում թեմական յանձնաժողով ընտրուեց, գրեթէ ամեն տեղ նախապատրաստական ժողովներ ու խորհրդակցութիւններ են լինում, սակայն մեր Բագուն լուռ ու մունջ է։ Ցիշում եմ, երբ առաջին անգամ համազգային մեծ յոբելեանի հարցը դրուեց տեղումս և ժողով գումարուեց, մի փոքրաթիւ ժողով, որը սկսեց ճառել ամբողջ բագուարնակ հայերի բերանից, մասնաժողով ընտրեց, պարզեց, թէ այդ ժամանակ Թիֆլիզում գոյութիւն ունեցող ուղղութիւններից որին յարի, (ի հարկէ այդ փոքրամասնութիւնը հէնց իրենք մի ուղղութեան պատկանողներ էին), բայց երբ հարցը փակուեց և որոշուեց յետաձգել տօնի օրը մի տարով, այստեղի մասնաժողովը, շատ եռանդուն լինելով՝ չհամբերեց մի երեկոյթ կազմակերպեց իր անունից և կարծես թէ տօնեց պրծաւ մեծ տօնը։ Ցիշում ենք այն չոր ու ցամաք ծրագիրը, որ ունէր երեկոյթը և յիշում ենք այն հոծ բազմութիւնը, որ լցրել էր դահլիճը, սակայն ի՞նչ եղաւ երեկոյթի եկամուտը, ո՞ւր գնաց, դրանո՞վ արդեօք վերջացրեց մասնաժողովը իր գործունէութիւնը, թէ այժմ էլ, երբ հարցը դրականապէս դրուած է, նա մի որ և է բան է անում կամ ուզում է անել,— այդ ամենը մութն է և անյայտ։ Չէ՞ որ այդ մասնաժողովը ճառում էր Բագուի ամբողջ հայութեան կողմից, և մի՞թէ Բագուն դրանով էլ վերջացրեց իր պարտքը մեծ տօնի վերաբերմամբ։

Ցանկալի էր, որ մասնաժողովը պարզէր իրերի դրութիւնը, արածը. առանց դրան էլ ժամանակը քիչ է։ Բագուն շատ պիտի անի, նա դեռ ոչնչով չի ցոյց տուել իր երախտագիտութիւնը ոչ դպրոցին, ոչ էլ գրողին, պէտք է որ մասնաժողովը շտապի միանալ Թիֆլիզի թեմական մասնաժողովին և գործել, ինչպէս մի երկրորդ կենդրոն Կովկասի հայ ազգաբնակութեան, ու նրա գործունէութիւնը թերևս պակաս պտղաբեր չլինի թէ դպրոցական և թէ գրական ֆոնդերի համար։

Սպասում ենք։

Արամ Ալ.